ԿԱՐԾԻՔ

«Հայաստանի Հանրապետության «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ

2025 թ. հոկտեմբերի 28-ին ՀՀ արդարադատության նախարարության կողմից e-draft հարթակում հանրային քննարկման է ներկայացվել Հայաստանում լոբբիստական գործունեության թափանցիկությանը վերաբերող ՀՀ «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ):

Ստորև ներքոստորագրյալ կազմակերպություններս ներկայացնում ենք մի շարք դիտարկումներ ու առաջարկություններ նշված նախագիծը բարելավելու, ինչպես նաև, ընդհանուր առմամբ, լոբբինգի թափանցիկությունն ապահովելու նպատակով:

1. Նախագծի մշակումը բխում է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2023-2026 թթ. գործողությունների ծրագրի Գործողություն 1.23-ից, որով նախատեսված է *«Ներդնել լոբբիստական գործունեության (ոչ իրավաչափ ազդեցության) վերաբերյալ կարգավորումներ»*: Չնայած որ գործողության ձևակերպմամբ հստակեցված չէ ներդրման մարմինների շրջանակը, ՀՀ արդարադատության նախարարությունը տվյալ նախագիծը ներկայացնելիս սահմանափակվել է միայն գործադիրում լոբբինգի թափանցիկության խնդրի կարգավորմամբ: Անշուշտ, գնահատելի է, որ նախագիծը նախատեսում է լոբբինգի ազդեցության ենթակա իրավաստեղծ գործունեության բավականին լայն շրջանակ, այն է՝ *«նորմատիվ, լոկալ կամ անհատական իրավական ակտեր ընդունելուն, փոփոխելուն, լրացնելուն կամ ուժը կորցրած ճանաչելուն ուղղված գործունեությունը»*: Միաժամանակ, հարկ է նշել, որ *«լոբբիստական գործունեություն»* հասկացության տակ ողջ աշխարհում հասկացվում է ոչ միայն գործադիրի, այլև առավել ևս խորհրդարանի պատգամավորների օրենսդիր գործունության, ինչպես նաև ՏԻՄ-երի կողմից որոշումների վրա ազդեցության նպատակ հետապնդող գործունեությունը, որոնք կարգավորումից դուրս են մնացել և չեն կարող ապահովել հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված նպատակների իրացումը: Այսինքն, նախագիծը միանշանակ ողջունելի է, սակայն ոչ բավարար:

   Առաջարկ
   - Նախատեսել պատգամավորների իրավաստեղծ գործունեության վրա ազդող լոբբիստական գործունության թափանցիկությունը կարգավորող դրույթներ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում, ինչպես նաև ՏԻՄ-երի վրա ներգործության թափանցիկությունը կանոնակարգող դրույթներ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներում: Միաժամանակ ձեռնարկել քայլեր շուտափույթ ապահովելու համար պատգամավորների և համայնքների ավագանիների, ինչպես նաև համայնքային հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների ընդունումը և համապատասխան էթիկայի հանձնաժողովների ձևավորումը:

2. Նախագծով նախատեսված է, որ *«Տեղեկացման պարտականության չկատարումը կարող է առաջացնել կարգապահական պատասխանատվություն»*: Այսպիսի ձևակերպման պարագայում տվյալ դրույթը կարող է կիրառվել խիստ հայեցողաբար: Իրավախախտման այս կամ այն փաստի առկայության դեպքում իրավասու մարմինը չպետք է

իրավասություն ունենա որոշելու կոնկրետ անձի նկատմամբ կիրառել պատասխանատվություն, թե՝ ոչ:

Առաջարկ

- Նախագծով կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթը վերաձևակերպել հետևյալ կերպ. *«Տեղեկացման պարտականության չկատարումը առաջացնում է կարգապահական պատասխանատվություն»:*

3. Նախագծով նախատեսված է, որ *«Պաշտոնատար անձի հետ հաղորդակցված անձին ապօրինի վարքագիծ դրսևորելուն կամ էթիկայի կանոնների խախտմանը ուղղված վարքագիծ դրսևորելուն դրդելու դեպքում պաշտոնատար անձը պետք է դադարեցնի կապը իր հետ հաղորդակցված անձի հետ»*: Նախ, արձանագրենք, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով պետական պաշտոն զբաղեցնող անձանց համար սահմանված են վարքագծի կանոններ, և ոչ թե էթիկայի կանոններ: Բացի այդ, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքով սահմանված վարքագծի նորմերի խախտմանը միտված գործողություններ իրականացնող անձի հետ միայն հաղորդակցության դադարեցումը բավարար չէ հետագայում վերջինիս կողմից համանման քայլերը բացառելու համար:

Առաջարկ

- *«Էթիկայի կանոններ»* բառակապակցությունը փոխարինել *«վարքագծի կանոններ»* բառակապակցությամբ:
- Հաղորդակցված անձի կողմից պաշտոնատար անձին ապօրինի գործունեության դրդելուն միտված գործողությունների մասով, բացի հաղորդակցվող անձի հետ կապը դադարեցնելուց, պաշտոնատար անձին պարտավորեցնել այդ մասին տեղեկացնելու համապատասխան իրավասու անձին:

4. Նախագծերի շրջանակներում՝ որպես տեղեկացման ոչ ենթակա տվյալներ են սահմանված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից իրենց իրավունքների պաշտպանության և իրացման հետ կապված հաղորդակցությունը: Գտնում ենք, որ այն ոչ հրապարակային հաղորդակցությունը, որը միտված է կառավարության կողմից անհատական իրավական ակտերի ընդունմանը (այդ թվում՝ առանձին իրավաբանական անձանց համար հարկային կամ այլ արտոնությունների սահմանմանը), ենթակա պետք է լինի տեղեկացման, անկախ նրանից, թե այդ հաղորդակցությունը հանգեցրել է կառավարության կողմից համապատասխան որոշման ընդունմանը, թե՝ ոչ: Արձանագրենք, որ նման հաղորդակցությունները կարող են հանգեցնել նաև նորմատիվ իրավական ակտերի ընդունմանը և անմիջականորեն կապված լինել իրավաբանական անձանց կողմից իրենց իրավունքների իրացման հետ: Օրինակ՝ հանրային գերակա շահ ճանաչելու վերաբերյալ կառավարության որոշումները, թեև ունեն նորմատիվ բնույթ, սակայն ներառում են կոնկրետ իրավաբանական անձանց՝ որպես ձեռքբերող ճանաչելու և դրանից բխող իրավունքների վերաբերյալ հստակ կարգավորումներ: Երկու դեպքերում էլ համապատասխան հաղորդակցությունները պետք է ենթակա լինեն տեղեկացման պատշաճ հանրային վերահսկողության իրականացման նպատակով:

Առաջարկ

- Նախագծերի շրջանակներում որպես տեղեկացման ոչ ենթակա տվյալ՝ սահմանված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից, իրենց իրավունքների պաշտպանության և իրացման հետ կապված հաղորդակցությունից սահմանել բացառություն՝ կառավարության կողմից անհատական և նորմատիվ իրավական ակտերի ընդունման վրա ազդելուն միտված հաղորդակցությունների վերաբերյալ:

5. Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է, որ ՀՀ «Հանրային ծառայության մասին» օրենքում *«լրացվող նոր 28.1 հոդվածի 1-4-րդ, 6-8-րդ մասերը ուժի մեջ են մտնում տեղեկացման կարգի մանրամասները, տեղեկացված տվյալների հրապարակման իրավասու անձանց շրջանակը սահմանող կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու հաջորդ օրվանից»*: Այս կարգավորումը թերի է, քանի որ նախագծով սահմանված չէ կոնկրետ ժամկետ, ինչը կարող է ձգձգել բարեփոխման իրականացումը և/կամ հանգեցնել դրա ձախողմանը:

Առաջարկ

- Օրենքով նախատեսել, որ տեղեկացման կարգի մանրամասները, տեղեկացված տվյալների հրապարակման ձևաչափը, իրավասու անձանց շրջանակը սահմանող կառավարության որոշումն ընդունվում է օրենքի ընդունումից հետո 3-ամսյա ժամկետում: Կառավարության որոշմամբ նախատեսել, որ իրավասու մարմնի կողմից տեղեկությունները հավաքագրվում են և հրապարակվում են միասնական գրանցամատյանում/ռեեստրում: Դիտարկել վերջինիս համակարգման ու տեխնիկական սպասարկման գործառույթների վերապահումը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ